

ԽՈՍՔԻՐԱՍԱՅԻՆ ՏԱՐԱԺԱՐԱՆԱԿԱ ՏԱՐԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(երկարժեք > երկարժեք)

Ա. Գ. ՀԱՅՐԱԳԵՏՅԱՆ

Մեր լեզուն հարուստ է տարածամանակյա տարարժեք բառերով, որոնք մեր կարծիքով, ոչ գծային բառաստեղծման արդյունք են: Խոսքիմասային տարարժեքությունը ունի ոչ միայն միարժեք > տարարժեք ուղղություն՝ իր բաղադրյալ տեսակներով, այլև երկարժեք > տարարժեք ուղղություն՝ իր բաղադրյալ գրականություններով: Այս տիպի բառերը ոչ գծային բառաստեղծման ոլորտ են ընդգրկվել, խոսքիմասային երկարժեքություն ձեռք են բերել մեր լեզվի նախագրային շրջանում կամ գրաբարի զարգացման նախնական փուլում, քանի որ գրաբարյան բառարանում և բնագրերում գրանք արդեն գրականում են խոսքիմասային երկարժեքություն: Տրամաբանական մոտեցմամբ, ինչպես սովորաբար, այս բառերը ևս պետք է որ ստեղծված լինեին մեկ խոսքիմասային արժեքով, սակայն մեր լեզվի զարգացումը հասցրել է նրան, որ սրանք խոսքիմասային երկարժեքություն են գրականում հենց գրաբարում՝ տարբեր հիմքերով պայմանավորված և խոսքիմասային իրենց արժեքները պահպանել են մեր լեզվի զարգացման հետագա շրջաններում կամ կրել խոսքիմասային արժեքների քանակական և որակական փոփոխություններ:

Այժմ անցնենք տարածամանակյա տարարժեք բառերի (երկարժեք > տարարժեք) քննությանը:

Տարարժեք բառեր, որոնք պահպանել են խոսքիմասային երկարժեքություն թե՛ քանակական, թե՛ որակական տեսակետից:

ա) Ածական||գոյական > ածական||գոյական տարածամանակյա տարարժեք բառերը պահպանել են իրենց երկարժեքությունը մեր լեզվի զարգացման ամբողջ գործընթացում: Որոշակի թիվ են կազմում արմատական բառերը, որոնք ոչ միայն պահպանել են իրենց խոսքիմասային արժեքները, այլև բառիմասային ամբողջ ծավալը, կան բառեր, որոնք բառագործածության ընթացքում բառիմասային ընդլայնում են կատարել, սակայն ձեռք բերած իմաստները ոչ միայն սերտորեն կապված են գրաբարյան բառիմասային հետ, բխում են դրանից, այլև խոսքիմասային արժեքի փոփոխության շնորհիվ են թափանցել: Ուսումնասիրություններից պարզվում է, որ

1) Արմատական ածական||գոյական երկարժեք այս բառերի մի մասը մատնանշում են անձ և անձի հատկանիշ, օրինակ՝ ալևոր բառը վրաբարում երկարժեք էր՝ «սպիտակ մորուքով, սպիտակահեր, ծեր (անձ)» իմաստով, ինչպես՝ Այր ալևոր իբրե հին աւուրց (ՆՀԲ, 1, 13), — ած.: Գարշելի ալևոր (նույն տեղում), — գոյ.: Կարծում ենք, որ գրաբարում ալևոր այս բառակազմակերպությունը խիստ գործածական է եղել և այդ բառի ածական||գոյական երկարժեքությունը պայմանավորված է եղել այդ կայուն բառակազմակերպության գոյությամբ, որի կրճատմամբ բացատրվում է ալևոր գոյականի առաջացումը, իսկ բառակազմակերպության գործածությամբ՝ ալևոր ածականի առկայությունը: Ենթադրելի է նաև այն փաստը, որ այս բառը նախագրային շրջանում ածական է եղել: Այս համաբանությամբ գրաբարում երկարժեք էր ալևոր բառի հոմանիշը՝ ծերունի ածանցավոր կազմությունը, ինչպես՝ Ուլի ից է հայրն ծեր ծերունի (ՆՀԲ, 1, 101), — ած.: Ամուլ հինն ծերունին (նույն տեղում), — գոյ.: Այս հոմանշային խումբը լրացնում է նաև ծեր բառը, որը նույնպես գրաբարում ածական||գոյական երկարժեքություն ունի, սակայն իմաստով մի փոքր լայն էր, քան ալևոր, ծերունի բառերը, որոնք սովորա-

բար վերաբերում էին միայն տղամարդուն, իսկ ծեր բառը՝ և՛ տղամարդուն, և՛ կնոջը (նաև ծեր աղվես, ձի) և սրան իմաստով շատ մոտ զառամ բառը, ինչևէ, այս բառերը նախագրային շրջանում եղել են ածականներ. դրարարում արդեն ածական||դոյական երկարժեքություն ունեն, որը ժառանգել է արդի հայերենը: Հմմտ.՝ նստել էր մի ալևոր մարդ և մտախոհ շիրուխ էր ծխում (ԺՀԲԲ, 1, 14),—ած.: Հայտնվեց մի պատկանելի ալևոր (նույն տեղում),—գոյ.: Մերունի պահպանն արդեն բարձրացրել էր ուղեկալ գերանը (ԺՀԲԲ, 2, 665),—ած.: Մերունին ձեռքը տարավ դեպի ճերմակ մորուքը (նույն տեղում),—գոյ.: Մի ծեր կին էր անցնում փողոցով (ԺՀԲԲ, 2, 662),—ած.: Տանուտերը հավաքել էր յուր մոտ մեր շենի բոլոր ծերերին (նույն տեղում),—գոյ.: Իսկ մի ծերունի՝ զառամ ու դողդոջ, կանգնել էր ճանապարհի եզրին (ԺՀԲԲ, 2, 8),—ած.: Կույսին, զառամին մոտեցնում է) իրար (նույն տեղում),—գոյ.:

Նկատելի է՝ եթե ալևոր և ծերունի բառերում գոյականական արժեքը դերիշխող է, և սրանք այլևս ածականի համեմատության աստիճաններով չեն կարող փոխվել, ապա ծեր բառում ածականական է գերիշխող, և հեշտությամբ այն ստանում է համեմատության աստիճաններ՝ ալվելի ծեր, ամենածեր:

Լինելով անձերի հասարակ անուններ՝ արմատական ածական||գոյական>ածական||գոյական տարածամանակյալ տարարժեք բառերը իրարից տարբերվում են.

ա) ածականի և գոյականի խոսքիմասային արժեքների գերակայության տեսակետից.

1) ածականական արժեքը գերիշխող է ծեր, ծանոթ, օտար, հսկա և այլ բառերում: Այստեղ նկատելի է մի շատ հետաքրքիր երևույթ. ածականական արժեքի գերակայությունը բացատրվում է բառիմաստի ժավալի ընդգրկումով: Որպես անձի հասարակ անուններ՝ սրանք երկարժեք են և գործում են որոշակի կայուն ածական-գոյական բառակապակցություններում, որի ժամանակավոր կրճատումից այս բառերը գոյականական արժեք են ձեռք բերել, որը ամրագրվել է նրանց բառիմաստի մեջ, սակայն այս բառերը ոչ անձ ցույց տվող բառերի հետ էլ կարող են գործածվել, և բառագործածության այսպիսի միջավայրում դրանք միայն ածականներ են, ինչպես՝ օտար երկիր, ծեր շուն, ծանոթ կինոնկար, հսկա լեռ և այլն:

2) Դոյականական արժեքը գերիշխող է այրի, ամուրի, կույս և այլ բառերում, քանի որ առանց գործածելու (այրի կին, ամուրի տղամարդ, կույս աղջիկ) կին, տղամարդ, աղջիկ որոշյալները հայերեն լեզվամտածողություն ունեցող անձերի համար ինքնին հասկանալի է դրանց գոյությունը համապատասխան բառի մեջ: Սա բացատրվում է վերոհիշյալ բառերի բառիմաստի խիստ նեղ ընդգրկումով:

3) Ածականական և գոյականական արժեքները հավասարապես գոյություն ունեն պանդուխտ, սրիկա, հայ, տաֆիկ և այլ բառերում, որոնք նկատելի է այս և նման այլ բառերի բառագործածության գործընթացում:

բ) Անձի որոշակի հատկանիշ և միևնույն ժամանակ անձի հասարակ անուն մատնանշող այս բառերում առկա է անձի գաղափարի ընդգրկման քանակային տարբերություն: Եթե խոսքիմասային ածական||դոյական տարածամանակյա տարարժեքություն դրսևորող հսկա բառը ունի «շատ մեծ, հագին, հսկայական, վիթխարի» ածականական իմաստը, ինչպես՝ հսկայ մարդ, սառ և այլն (ՆՀԲ, 2, 128),—ած., և դրանից նախագրային շրջանում դարգացել է «հաղթանդամ և արտակարգ ուժի տեր անձնավորություն» գոյականական իմաստը, ինչպես՝ Զմսորդ յաղթանդամ՝ հսկայ անուանեն (նույն տեղում)—գոյ., այսինքն՝ սվյալ դեպքում այն մատնանշում է միայն մեկ անձ, ապա խաժամուժ բառի ածականական արժեքը «խառնիճաղանջ, ամբողջական իմաստ ունի, ինչպես՝ Այլ այն խաժամուժ ամբոխն, որ ոչ գիտեն զօրէնս (ՆՀԲ, 1, 911), իսկ գոյականականը՝ խառնիճաղանջ ըրադմություն.

խառնամբուխ՝ իմաստ, ինչպես՝ Եկեղեցին լի էր խաժամուժով (նույն տեղում), այսինքն տվյալ դեպքում այն մատնանշում է ոչ թե մեկ անձ, այլ տվյալ հատկանիշ ունեցող անձերի խումբ, բազմություն, հետևաբար եսկա և խաժամուժ բառերի գոյականական արժեքի մեջ քանակային տարբերություն կա՝ անձերի ընդգրկման քանակի տեսակետից: Բառիմաստային և խոսքիմաստային արժեքների դրսևորման այս առանձնահատկությունը ժառանգել է ժամանակակից հայերենը:

2) Արմատական ածական||գոյական երկարժեք այս բառերի մի մասն էլ մատնանշում են միաժամանակ և՛ իր, և՛ դրանց հատկանիշները, ինչպես՝ Լառայալուի, կոշտ, խոպան, ապառաժ և այլն:

3) Ածական||գոյական տարածմանակա տարածքի բառերի մի մասն էլ արտահայտում են վերացական գաղափարներ, բնության կամ այլ երեվույթներ, գույներ և այլն, ինչպես՝ ապագա, կանաչ, մուր, ներկա, օրմ, ցուրտ և այլն:

Մենք նշել ենք, որ արմատական ածական||գոյական երկարժեք այս բառերի ճնշող մեծամասնությունը պահպանել են իրենց գրաբարյան բառիմաստի ամբողջ ծավալով լեզվի պատմական զարգացման գործընթացում և եթե անգամ որոշ փոփոխություններ էլ կան այդ բառիմաստներում, ապա դրանք անբոտորեն կապված են գրաբարյան իմաստների հետ, անմիջականորեն բխում են դրանցից: Սակայն կան մի շարք բառեր, որոնք շնայած պահպանել են ածական||գոյական երկարժեքություն արդի հայերենում, սակայն որոշակի փոփոխություններ են կրել բառիմաստի ոլորտում, այսպես՝ անդրաճիկ բառը երկարժեք է և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում «առաջնեկ, ծնողների առաջին զավակը» իմաստով, նկատելի է անդրաճիկ զավակ ածական-գոյական կայուն բառակապակցության առկայությունը, որի գործածությունը և որոշյալի ժամանակ առ ժամանակ կրճատումը ապահովում է ածական||գոյական երկարժեքությունը: Սակայն արդի հայերենում անվանակարգության հիմքով՝ որպես տղամարդու հատուկ անուն, միայն գոյական է: Գոհար բառը նույնպես գոյական է եղել «ազնիվ՝ թանկագին քար» իմաստով: Գրաբարում այն ձևը է բերել նաև «աղնվաղույն, շողշողացող, գոհար» ածականական իմաստը, որը բնականաբար զոհար գոյականի հատկանիշներից է բխել, և այդ բառը դարձել է խոսքիմաստային երկարժեք բառ, որը ժառանգել է արդի հայերենը, սակայն անվանակարգության հիմքով՝ որպես կանացի հատուկ անուն, միայն գոյական է:

Գոռ բառը երկարժեք էր գրաբարում: Որպես ածական այն ուներ ժիրոխտ, ահրեկեց՝ իմաստ, ինչպես՝ Այր զոռ պատերազմաւ էր (ՆՃԲ, 1, 572), գոյականը ուներ «գոռումն, գոռումն, դղորդ, գրգիռ մարտի» իմաստ, ինչպես՝ Մակեդոնացւոց դադարեալ զոռն (նույն տեղում): Արդի հայերենում պահպանել է ածականական արժեքը գրաբարյան համապատասխան իմաստով, սակայն կորցրել է գրաբարի գոյականական իմաստը, բայց արդի հայերենում ունի նոր գոյականական իմաստ՝ որպես տղամարդու հատուկ անուն, բնականաբար պահպանելով գոյականական խոսքիմաստային արժեքը:

Դալար բառը նույնպես ածական||գոյական երկարժեքություն ուներ գրաբարում, որպես ածական՝ «առույգ, կանաչ, մատղաշ» իմաստով, որպես գոյական՝ «բուսնոց խոտ, սեղ» իմաստով, որը պահպանվել է ժամանակակից հայերենում, սակայն այն այժմ նաև գոյական է անվանակարգության հիմքով՝ որպես Արտաշատի շրջանի գյուղի անվանում: Գալար բառը միջին հայերենում միայն ածական էր: Իմաստային նույն զարգացումն ունի նաև նեղեճ բառը, որը և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում երկարժեք էր «պանգուխա, օտար երկրում ապրող (անձ)» իմաստով: Սակայն այն անվանակարգության հիմքով նաև գոյական է՝ որպես տղամարդու հատուկ անուն:

Հնամբրբի իմաստային զարգացում ունի կարմիք բառը, որը գրաբարում եղել է ածական՝ «շեկ, վարդագույն, արյունագույն, բոցագույն, ծիրանագույն, ոսկեգույն» իմաստով, ինչպես՝ Ծտեա պշուրսն կարմիք իբրե զարին

(ՆՀԲ, 1, 1095): Գոյականը ունեն Եկարմիր գույն. ներկ կարմիր. որդան կարմիր» իմաստը, ինչպես՝ կարմրովն ներկելով (նույն տեղում): Միջին հայերենում կարմիր բառը գոյական էր՝ «ոսկի, ոսկեգրամ» իմաստով. ինչպես՝ Թէ գան տան հազար կարմիր, քո մազէդ մազ մի չի փոխեն (ՆՀԲ, 1, 339): Արդի հայերենը ժառանգել է կարմիր բառի գրաբարյան բառիմաստները և բնականաբար խոսքիմասային երկարժեքությունը. իսկ միջին հայերենի գոյականական իմաստի հետքն անգամ այժմ չի երևում: Չնայած որպես դրամ խոսակցական լեզվում խորհրդային կարգերի օրոք գործածական էր կարմիր տասանոց> կարմիր կաղապարը, որը սակայն մնաց խոսակցական գործածական ոլորտում, որը գուցե միջին հայերենի «դրամ» իմաստի ժառանգությունն էր: Ինչևէ, կարմիր բառը բացի գրաբարյան երկարժեքության ժառանգությունից, արդի հայերենում արտալեզվական երևույթների ազդեցության հիմքով ածական||գոյական երկարժեքություն ձեռք բերեց նաև «կոմունիստական հասարակարգը պաշտպանող, հեղափոխական (զինվոր)» իմաստով: Նկատելի էր կարմիր զինվոր ածական-գոյական իմաստային բառակապակցության առկայությունը, ինչպես՝ Հյուսիսից և արևելքից կարմիր զնդերը կիրճերով, ծերպերով առաջ էին գալիս (ԺՀԲԲ, 3, 85),— ած.: Կարմիրենբեր անցան հարձակման,— գոյ.: Գոյականը սովորաբար հոգնակի թվով էր գործածվում:

Սպիտակ բառը նույնպես գրաբարում ածական էր «ձյան, կավճի, կաթի գույն ունեցող» իմաստով, ինչպես՝ Հանդերձ նորա սպիտակ իբրև զձին (ՆՀԲ, 2, 738), գոյական՝ սպիտակ գույնը, սպիտակ ներկ» իմաստով, ինչպես՝ Սնդուրեցաւ, յերփնաներկս, և լուսաւորեաց զճակատն սպիտակսու (նույն տեղում): Խոսքիմասային այս երկարժեքությունն ամբողջ բառիմաստի ծավալով ժառանգել է արդի հայերենը, սակայն արտալեզվական ազդեցություն հիմքով, հասարակական կյանքով եղած փոփոխություններով պայմանավորված՝ սպիտակ բառը ժամանակակից հայերենում երկարժեք է նաև «հակահեղափոխական, քաղաքացիական կռիվների տարիներին խորհրդային իշխանության և Կարմիր բանակի դեմ կռվող (զինվոր)» իմաստով, ինչպես՝ սպիտակ զինվոր, հրամանատար,— ած.: Հանկարծ որդուն մտաբերեց, միակ որդուն, որ փախել էր սպիտակների հետ և տարին մի նամակ էլ չէր դրում (ԺՀԲԲ, 4, 326),— գոյ.: Որպես գոյական սովորաբար գործածվում էր բառի հոգնակի ձևը: Կարմիր զինվոր կաղապարի նման լեզվում երևան եկավ սպիտակ զինվոր իմաստային կաղապարը՝ լեզվում գործող համաբանության սկզբունքի հիմքով պայմանավորված: Ինչևէ, և՛ կարմիր, և՛ սպիտակ բառերը մեր լեզվում կարծես ունեն երկու կտրվածքով երկարժեքություն՝ ժառանգաբար անցած և ձեռքբերովի (վերջինս՝ նաև փոխաբերական կիրառության հիմքով): Արմատական բառերի համեմատությամբ բավականին մեծ թեմ են կազմում ածանցավոր կազմությունները, որոնք ղրաբարից ժառանգվել են՝ որպես ածական||գոյական երկարժեք լեզվական միավորներ: Սրանց ածականական ծագումը վկայում է այս կամ այն ածականակերտ ածանցի առկայությունը: Սակայն մեր լեզվի զարգացման գործընթացում այս բառերը ընդգրկվել են ոչ գծային բառաստեղծման ոլորտը և հնչյունային նույն կազմով արդեն գրաբարում ձեռք են բերել նաև գոյականի խոսքիմասային արժեք, բերականական հատկանիշները՝ սովորաբար որոշակի իմաստով: Այսպես՝

— Ական ածանցի ընդհանուր բառակաղմական նշանակությամբ, իսկ փոխանվանական կիրառության հիմքով նաև «հասարակական, քաղաքական կուսակցությունների կամ խմբակցությունների անգամ, զաղափարակից, կողմնակից» իմաստով գրաբարից ի վեր ածական||գոյական երկարժեքություն ունեն արևմտական, կղերական բառերը: Հմմտ.՝ վտանգավորն այն էր, որ նաև մտքրեց մի նոր և, հայոց եկեղեցու հոգուն հակառակ, բոլորովին այլ կղերական ուղղություն (Բ, 5, 153),— ած.: Հասկանալի է, որ այսպիսի գրու-

թյան հետևոր միտքն անգամ չէին կարող ընդունել Հոռմի համաշխարհային տիրապետությունը պատրաստող կղերականները (ԼՀՊ, 2, 10),—գու.:

—Այլան ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությամբ և ռեա-
կատիվի ցույց տված սեղում աշխատող, ապրող, մասնակից կամ ինչ-որ
րանով զրադիող անձ» ընդհանուր իմաստով՝ անապատական, բեմական. գա-
վառական, լեռնական, հանդիսական բառերը զրաբարում արդեն ածական
զոյական երկարժեքություն ունենին: Անապատական բառը զրաբարում ածա-
կան էր՝ «անապատին վերաբերող՝ հատուկ» իմաստով, ինչպես՝ զկապիկս
անապատական, անապատական տատրակն (ՆՀԲ, 1, 110): Բայց այս բառը
նաև զոյական էր՝ «անապատի ճղնավոր, առանձնակյաց» իմաստով, ինչպես
Անապատականաց առաջնորդ (նույն տեղում): Խոսքի մասային իմաստի երկ-
արժեքությունը պահպանվել է նաև ժամանակակից հայերենում, ինչպես՝ Հան-
կարծ բարայրից գուրս եկավ իմ հանդեպ մի ալեոր անապատական մարդ (Բ,
1, 82),—ած.: Նա հեռանում էր սև լեռան կողմերը, որտեղ ապրում էին մե-
նակյաց անապատականները (ԱԲԳ, 75),—գու.:

Բեմական բառը զրաբարում ածական զոյական երկարժեքություն ունե-
ր «եկեղեցական» աստիճանավոր՝ սարկավազ, քահանա, որ կարող էր մտնե-
ր խորան» ինչպես՝ բեմական ֆահանայ,—ած.: Աղօթական անխրախույս, բե-
մական (սուրկաւադ) սաորնութարշ (ՆՀԲ, 1, 481),—գու.: Ժամանակակից
հայերենում բեմ բառի իմաստը ընդլայնվել է, իսկ բեմական բառը այժմ ու-
նի՝ ալան ածանցի ընդհանուր բառակազմական իմաստը՝ բեմական զարդա-
րան, ղեկուրացիա, —ած.: Իսկ որպես զոյական այն ձեռք է բերել «զերա-
սան» իմաստը, ինչպես՝ Հայ բեմականները մեծ հաջողությունների հասան
արտասահմանում: Բեմական բառը շնայած փոխել է իր բառիմաստը, սա-
կայն և՛ զրարարում, և՛ ժամանակակից հայերենում գրսևորում է ածական:
զոյական երկարժեքություն:

Լեռնական բառը զրարարում ածական էր՝ «լեռանը վերաբերող, հատուկ»
իմաստով, ինչպես՝ Զամենայն քաղաքս լեռնականս (ՆՀԲ, 1, 883): Սակայն
այն նաև զոյական էր՝ «լեռներում ապրող, բնակիչ» իմաստով, ինչպես՝
Միարանակալք ալանը լեռնականօքն ամենայնիւ (նույն տեղում): Այն նաև
ունեի «լեռներում բնակվող միայնակյաց» զոյականական իմաստը, ինչպես՝
Միանձնական լեռնական (նույն տեղում): Ժամանակակից հայերենում լեռ-
նական բառը որպես ածական ռեալատիվին վերաբերող՝ հատուկ իմաստով
չի գործածվում, այն այժմ հնացած ձև է, և արդի հայերենում գործածական
է լեռնային բառը: Լեռնային քինջ օր է: Եվ լեռնային վճիտ, ալիքավոր օդը
վետվեում է բլուրներից սկսած մինչև Զորագետը (ՍԶ, 3, 1): Չնայած այս
ամենին լեռնական բառը արդի հայերենում նույնպես գրսևորում է ածա-
կան զոյական երկարժեքություն՝ զրաբարյան զոյականական արժեքի ար-
տահայտած իմաստով, այն կարող է գործածվել լեռնական մարդ (անձ)
ածական-զոյական իմաստային կաղապարով՝ որպես ածական, իսկ որոշյալի
կրճատումով նաև զոյական է՝ Լեռնականները հոծ խմբերով հարձակվեցին
ճամբարի վրա (Բ, 3, 47): Ինչ վերաբերում է հանդիսական, գավառական բա-
ռերին, ապա սրանք ժամանակակից հայերենում սլահպանել են իրենց զրա-
րարյան և՛ բառիմաստները, և՛ ածական զոյական խոսքի մասային արժեք-
ները:

Բայական նախատիպերից ալան ածանցով կազմված մի քանի ածան-
ցավոր բառեր զրարարից ի վեր գրսևորում են խոսքի մասային երկարժեքու-
թյուն: Այսպես՝ աղոթական բառը զրաբարում ածական էր՝ «աղոթքին վերա-
բերող՝ հատուկ» իմաստով, ինչպես՝ Պարզեւ ալօթական րանիցն զվճիռ մա-
հուն (ՆՀԲ, 1, 46): Բայց այս բառը՝ որպես գործողի անուն, նաև զոյական էր՝
«աղոթող, ուխտավոր» իմաստով, ինչպես՝ Ոչ զաղօթականաց զգեցեալ զկեր-
պարանս (նույն տեղում): Ածական զոյական խոսքի մասային երկարժեքու-
թյունը բառիմաստի անփոփոխ ձևով ժառանգել են և՛ միջին հայերենը, և՛
ժամանակակից հայերենը:

Գրաբարում ածական||գոյական խոսքիմասային երկփեղկված արժեքով է հանգես գալիս նաև վաճառական բառը. այն ածական էր՝ «ակաճ ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությամբ, ինչպես՝ Անցանէին արք մագիանացիք վաճառականա՛մ (ՆՀԲ, 2, 774), գոյական էր՝ «ապրանքների գնող և վաճառող անձ» իմաստով, ինչպես՝ Ով անմիտ վաճառական, զանմա՛հ և զանանց պատիւ հտուր, և զանցաւորդ գնեցեր (նույն տեղում)։ Խոսքիմասային երկարժեքությունը պահպանվել է ժամանակակից հայերենում, հմմտ.՝ Այդ սյուրպրիզը պետք է լիներ երեք-չորս հազարից բաղկացած մի գումար, որը նրանք կամենում էին հավաքել վաճառական հայերից դպրոցի օգտին (Մ, 2, 100),—ած.։ Վաճառականը հայրենիք շունի, նրա հայրենիքը այնտեղ է, ուր արծաթ կա (Բ, 9, 260)։

Երկփեղկված խոսքիմասային արժեքով է հանգես գալիս նաև գաղթական բառը գրաբարում, ինչպես՝ Սառա թագաւորին ոչ փոխանակեաց զգաղթական այրն իւր (ՆՀԲ, 1, 524),—ած.։ Յունաց գաղթականն. յորս և զՀռոմերոս ոմանք պատմեն (նույն տեղում),—գոյ.։ Այս բառը ածական||գոյական երկարժեքություն է դրսևորում նաև ժամանակակից հայերենում, հմմտ.՝ Գաղթական ժողովուրդը կոտորվում է սովից, ցրտից (ԱԲ, 13),—ած.։ Մի տարի չկա մայրը մեռել է, հայրը հեշտությամբ նրա գլխաշորը նվերում է... մի գաղթականի (ՍՁ, 102),—գոյ.։

Խոսքիմասային երկարժեքություն ունեն նաև ուսումնական (ուսմանը վերաբերող՝ հատուկ ած., ուսում առած մարդ, ուսյալ՝ գոյ.), կոչնական (հրավիրող, հուշող, իմաց տվող լանձ/), իմացական (իմացող, ըմբռնող, բանական լանձ/), խորհրդական (խորհուրդ տվող, խորհրդատու լանձ/), զինվորական (զինվորին վերաբերող՝ հատուկ՝ ած., բանակում ծառայող անձ՝ գոյ.) օտարական (օտար, պանդուխտ, ոչ տեղացի լանձ/), բարոյական (պարկեշտ, առաքինի, օրինավոր լանձ/):

Մինչև այժմ քննարկած բոլոր օրինակները գրաբարից ի վեր ունեն «ակաճ ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությունը, ինչպես նաև էախագրային շրջանում կամ գրաբարում արդեն ձևք են բերել գոյականի արժեք՝ անձի հասարակ անվան նշանակությամբ։

—Ակաճ ածանցով բառեր կան, որոնք անձի հասարակ անվան նշանակություն չունեն, այսպես՝ դամբանական բառը ածական էր գրաբարում «գեղեցիկանական, արձանական, ողբերգական» իմաստով, ինչպես՝ դամբանական ձայն, տառ, ճառ (ՆՀԲ, 1, 592), բայց նաև գոյական էր՝ «եղերգություն» իմաստով, ինչպես՝ Վերծանեացուք... զդամբանականն ուժնակի (նույն տեղում)։ Ժամանակակից հայերենում ածականը նույն իմաստն ունի, ինչպես՝ Այս բոլորը դամբանական ողբեր էին, որ նա կատարում էր իր հայրենիքի գերեզմանական անշարժության վրա (Բ, 3, 40)։ Գոյականը ձևք է բերել «գերեզմանում, թաղման ժամանակ ասվող խոսք» իմաստով, ինչպես՝ Նս այդ ձևերի վրա վաղուց արդեն կարգացել եմ իմ դամբանականը։

Ածական||գոյական երկարժեքություն ունի տավրեական բառը (բարձր միջնումասով կամուրջի երկու ծայրերի տափարակ մասերը), նաև գոյական է անվանակարգության հիմքով (մի հին կամուրջի անուն Արաբս յետի վրա), աբոտական (արոտով կերակրվող՝ արածող կենդանի/), ձնհյալական (զավակ ունեցող կամ ծնող լանձ/), ժամանակակից հայերենում նաև երկարժեք է՝ «ծնունդի վերաբերյալ տեղեկանք, վկայական» իմաստով՝ ձնհյալական փաստաթուղթ > ձնհյալական կաղապարով։

—Ավուր ածանցը նույնպես բավականին կենսունակ էր գրաբարում և կային որոշակի թվով բառեր, որոնք դրաբարում արդեն երկփեղկված ածական||գոյական խոսքիմասային արժեքներով էին հանգես գալիս, և դրանք հարատևել են մինչև մեր լեզվի զարգացման արդի փուլը։ Այսպես՝

1) բառեր, որոնք բացի —ավուր ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությունից ունեն նաև «նախատիպի ցույց տված զործիրը, ղենքը զոր»

ծածոգ, կրող անձնավորություն» ընդհանուր իմաստը, ինչպես՝ աղեղնավոր (նետաձիգ, աղեգ ունեցող կրող լանձ/), պարսավոր (պարս ունեցող, կրող, պարսով զինված լանձ/), ռուկանավոր (ռուկան ունեցող լանձ/, ձկնորս)։

2) -Ավոր ածանցով կազմված որոշ բառերը նաև գոյականներ են «նախադասության ցույց տվածի մասնակից կամ կողմնակից, դրան հարող անձ» ընդհանուր իմաստով, ինչպես՝ կրոնավոր բառը՝ կրօնաւոր ժուժկալին (ՆՀԲ, 1, 1138),—ած.։ Քահանայ կամ կրօնաւոր լինել (նույն տեղում),—գոյ.։ Ժամանակակից հայերենում՝ բայց այդ մոլեռանդ կրոնավոր մարդուն գրավելու համար լուրջ է նրան մի բանով կաշառել (Բ, 6, 213),—ած.։ Այդ վանքերը դեռ չեն էին ե լի բազմաթիվ կրոնավորներով (Բ, 5, 71),—գոյ.։

Ընդհանուր այս իմաստի տակ կարելի է դասակարգել նաև աղանդավոր, ուխտավոր և նման այլ բառեր։

3) -Ավոր ածանցով կազմված ձիավոր բառը նաև գոյական է «նախատիպի ցույց տված հեծյալ» ընդհանուր իմաստով, Հմմտ. գրաբարում՝ Կապարճակիր լինի իշխանին, ապա լինի ձիաւոր (ՆՀԲ, 2, 157),—ած.։ Տեր էր ձիաւորաց (նույն տեղում),—գոյ.։ Ժամանակակից հայերենում՝ Կամրջի գլխին երևացին ձիավոր ոստիկանները (ԱԲ, 593),—ած.։ Նա ներկայացնում էր մի շնորհալի ձիավոր, որի նմանը կարելի էր տեսնել պարսից բարձր ազնվականների որդիների մեջ (Բ, 2, 561),—գոյ.։

4) Որոշ բառեր, բացի -ավոր ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությունից, դրաբարում արդեն ունեն «նախատիպի ցույց տվածով զբաղվող» ընդհանուր իմաստ, ինչպես՝ կբպակավոր, և մոտ այլ բառակազմական նշանակությամբ, մասնավորապես «նախատիպով պայմանավորված» հասարակության մեջ դրաված տեղով, դիրքով» ընդհանուր իմաստով, ինչպես՝ աշխատավոր, առաջավոր, վաստակավոր բառեր։

5) -Ավոր ածանցով բայական նախատիպերից որոշ կազմություններ գրաբարում արդեն զրսերել էին ածական||գոյական երկարժեքություն, Հմմտ.՝ գրաբարում անցավոր բառը, անցաւոր արարածք, ժամանակօք (ՆՀԲ, 1, 250),—ած.։ Իկն անցաւոր, սռ այրն մեծատուն (նույն տեղում),—գոյ.։ Ժամանակակից հայերենում՝ Հերթով գալիս անց ենք կենում էս անցավոր աշխարհից (ՀԹ, 1, 250),—ած.։ Զուրը նաև լուր է տանում անցաւորներին ու պատմում է, թե ինչ է կատարվում արևի տակ,—գոյ.։ Գրաբարում երկփեղկված խոսքիմաստին արժեքներով էին հանդես գալիս նաև բունավոր, կալանավոր բառերը, որոնք ժամանակակից հայերենում նույնպես ածական||գոյական երկարժեքություն ունեն։

-Ավոր ածանցով մի շարք բառեր գրաբարից ի վեր հանդես են գալիս ածական||գոյական երկփեղկված արժեքներով, ինչպես՝ շնչավոր (շունչ ունեցող, կենդանի լիակ/), պնդնավոր (մինչև պնդները՝ կրունկները հասնող երկար ու զարգարուն լողեստ/), մառանգավոր (ժառանգության իրավունքի տեր լանձ/), վերձավոր (բարեկամ, մտերիմ, մոտիկ լանձ/), պատգամավոր (բառիմաստի որոշ ընդլայնում է կատարվել՝ արտալեզվական երևույթներով պայմանավորված՝ լիազորված, ընտրված լանձ/), վիճակավոր (հոգևորական դասին պատկանող (անձ). ժամանակակից հայերենում երկարժեք է նաև՝ «երեխայի սպասող լինի») իմաստով), կարգավոր (ած.՝ «բարեկարգ, կանոնավոր»,—գոյ.՝ «կրոնական աստիճան ունեցող հոգևորական» իմաստով, ժամանակակից հայերենում բառիմաստի ընդլայնում է կատարվել արտալեզվական երևույթներով պայմանավորված՝ սպորտային մասնագիտական բառապաշարում նույնպես երկարժեք է կարգավոր մարզիկ>կարգավոր կաղապարով)։ -Ավոր ածանցով բառերի երկարժեքությունը պայմանավորված է, մեր կարծիքով, ածանցի արտահայտած ընդհանուր բառակազմական նշանակությամբ։

-Իչ ածանցով կազմված գրաբարյան շատ բառեր ածական>գոյական ոչ զծային բառաստեղծմամբ ժամանակակից հայերենում տարածմանակյա տարարժեքություն ունեն, սակայն կա բառերի որոշակի մի խումբ, որը գրա-

բարում արդեն դրսևորում էր ածական||գոյական երկարժեքություն, որը ժառանգել է արդի հայերենը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ -իչ ածանցով կազմված բառերը հիմնականում պահպանել են իրենց բառիմաստի ամբողջ ծավալը կրելով աննշան փոփոխություններ՝ կախված հասարակական կյանքի և դիտատեսիական առաջընթացի հետագա զարգացման հետ:

Այսպես՝ արարիչ, բարգմանիչ, հալածիչ, մարգիչ, մեկնիչ, մխիթարիչ, մկրտիչ (նաև անվանակարգության հիմքով արդի հայերենում գոյական է), պատմիչ, փորձիչ, փրկիչ, ֆարոգիչ բառերը որպես երկարժեք բառեր ցույց են տալիս անձ, որը որպես մասնագիտություն, նախասիրություն, բնավորություն հիմ, մշտական գբադմունք կատարում է նախատիպի ցույց տված գործողությունը: Այս նշանակությամբ՝ որպես անձի հասարակ անուններ գրաբարից ի վեր այս բառերը ածական||գոյական երկարժեքություն ունեն: Սակայն իրերի հետ գործածվելիս միայն ածականներ՝ հալածիչ ելույթ, մխիթարիչ խոսք, փրկիչ հայացք և այլն:

Կարող են ունենալ նաև ածականի համեմատության աստիճաններ: Ընդ որում որպես անձի հասարակ անուններ գործածվելիս -իչ ածանցը հեշտությամբ կարող է փոխարինվել -ող ածանցով՝ բարգմանիչ-բարգմանող, մխիթարիչ-մխիթարող, պատմիչ-պատմող, փրկիչ-փրկող և այլն:

Իմաստային որոշ փոփոխություններ են կատարվել հետևյալ բառերում, սակայն դա չի փոխել նրանց խոսքիմասային պատկանելությունը, այսպես՝ օնոուցիչ բառը գրաբարում ածական էր՝ «ջնոուցող, չերմացուցիչ» իմաստով, ինչպես՝ Ջնոուցիչ և սուրբ և դերագոյն եռանդն (ՆՃԲ, 2, 671): Որպես գոյական ունեն «ջուր և այլ բան տաքացնելու անոթ» ինչպես՝ Զսանսն, և զօնոուցիչս, և զտաշտսն (նույն տեղում): Արդի հայերենում ածականական իմաստը պահպանվել է, ինչպես՝ օնոուցիչ համակարգ, հարմարանք և այլն: Գոյականական իմաստը հաճում է օնոուցիչ սարք>օնոուցիչ կաղապարին՝ մեզ հայտնի, գիտության նվաճումներով ստեղծված ջնոուցիչների ամբողջ տեսականին:

Ուղղիչ բառը գրաբարում երկարժեք էր միայն որպես անձի հասարակ անուն «առաջնորդ, կառավարող, ղեկավար, ուղղող» իմաստով: Արդի հայերենում պահպանելով այս իմաստը՝ ձեռք է բերել նոր իմաստ գիտատեսիական առաջընթացով պայմանավորված. այս տեսանկյունով նույնպես երկարժեք է՝ ուղղիչ սարք>ուղղիչ կաղապարով (էլեկտրական բարձրավոլտ հոսանքն ուղղող խարթ):

Կտրիչ բառը նույնպես երկարժեք էր գրաբարում «կտրող դանակ» իմաստով: Արդի հայերենում այս բառի բառիմաստը ընդլայնվել է: Ընդ որում բոլոր իմաստներով կտրիչ բառը ունի ածական||գոյական երկարժեքություն: Այսպես՝

1. որևէ բան կտրելու կամ հատելու դործիք՝ կտրիչ հարմարանք (սարք)> կտրիչ կաղապարն է գործում՝ զանակից մինչև գիսուկյան և տեխնիկայի ստեղծած հատող սարքերը, գործիքները:

2. Որևէ բան կտրող բանվոր, մասնագետ՝ կտրիչ անձ>կտրիչ ածական-գոյական իմաստային կաղապարը և դրա կրճատման արդյունքը:

3. Կաթնասուն կենդանիների, հաև մարդկանց մեղրի և սառնի ծնողների առջևի մասի կտրող առամները՝ կտրիչ առամ>կտրիչ ածական-գոյական կալուն կաղապարը և դրա կրճատման արդյունքը:

Փաստորեն վերջին օրինակների բառիմաստի փոփոխություն հիմնականում արտալեզվական ազդեցությունների հիմքով են կատարվում, և դրանք արդի հայերենում գիտարանում են:

Հայերենի զարգացման ամբողջ գործընթացում կան մի շարք այլ ածանցներով բառեր (սրանց թիվը այնքան էլ մեծ չէ), որոնք ածական||գոյական երկարժեքություն են դրսևորում:

Այսպիսով՝ ածական գոյական՝ ածական գոյական տարածամանակյա տարածքությունը նույնպես հայերենում օրինալիս երևում է, որը վկայում է մեր լեզվում գոյություն ունեցող օրինականների մեծ քանակի:

Ածական գոյական՝ ածական գոյական տարածամանակյա տարածք բառերի մի մեծ խումբ կա հայերենում, որոնք բարդ և բարդ ածանցավոր կապություններ են: Այնպիսի դրանց ձևերը հայերենում կապարհների առկայությունից՝ այդ բառերը նախապես պետք է ածականներ եղած լինեն, սակայն մեր լեզվի զարգացման հետագա զարգացումը տարբեր հիմքերով պայմանավորված, ձևեր են բերել նաև գոյական արժեք և զարգացումից ի վեր հանգես են պալիս երկարակամ արժեքներով, ինչ որում այդ բառերի հիմնական մասը պահպանել են իրենց բառիմաստները մեր լեզվի զարգացման ամբողջ զործրնթացում կամ կրել բառիմաստի անշաղկապ փոփոխություններ՝ պայմանավորված հասարակության և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքով, կամ բառիմաստի կական փոփոխությունները չեն ազդել նրանց խոսքիմասային պատկանելության վրա:

Այս տիպի բառերը ընդհանուր իմաստով արտահայտում են.

1) Անձ և անձի որոշակի հատկանիշներ:

Այդ բառերի բառիմաստում առկա է և՛ անձը, և՛ նրա բնավորությունը, արտաքին տեսքը, նախասիրությունները, հակումները, մտածողությունը, նրա մասնադիտությունը, ժամանակավոր դրամունքը, հասարակական գործունեությունը՝ աշխատանքի բնույթը, պաշտամունքը, կրոնական հայացքները, հավատը, նախապայմանները և այլն: Այսպես բնականորեն բառում առկա է և՛ անձը, և՛ բնույթի կրող անձը, բնական բառում անձը և այն անձը, որը բուն ուժ է գործադրում, բնական է և այլն: Որոշակիորեն երևում է, որ այս բառերի մեծ մասը անձի հասարակ անուններ են կամ վերաբերում են նրան, բայց եթե բանասեր, բանասեր, երկրակալ, կրակասեր և այլ բառերում առկա է մեկ անձը, ապա առաջադիր (զորք), առաջապահ, վերապահ (զորապետ) և այլ բառերում առկա են մի խումբ մարդիկ: Այս բառերը մեր լեզվի զարգացման ամբողջ ընթացքում հնչության միևնույն ձևով արտահայտել են և՛ հատկանիշ, և՛ այդ հատկանիշը կրողին, օրինակ՝ անդրազոր, արծաթագործ, բանասեր, բանասեր, երկրակալ, կաշառառու, նետածիգ, ջրաբեր, վանդակագործ, օտարագիր, օտարածին և այլն:

Որոշ բառերում նկատվել է բառիմաստի որոշակի փոփոխություն, որը չի առաջարկում նրա խոսքիմասային արժեքի վրա, այսպես՝ ժամապահ բառը դարձաբառ էր՝ «ժամը զորոշությանը պահող կամ դիտող» իմաստով, արդի հայերենում այն իմաստափոխվել է և ձևեր բերել «զինվորական ծառայող, որ որոշված ժամերի կանգնում է պահակակետում՝ հսկելու համար» իմաստը և ստեղծվել է ժամապահ զինվոր ածական-գոյական կապություն կապակցությունը, որի պահպանումը ածականական արժեքի դրսևորում է, իսկ կրճատումը՝ գոյականականի: Միևնույն ժամանակ բառը զարգարում երկարվել էր՝ «ծիրանի վաճառող» իմաստով, ինչպես՝ կինն ծիրանավաճառի խանութի հատկը (ՆՁԲ, 1, 1017),— ած. Դանիել մանուկ... և ծիրանեվաճառն՝ խանութի տիպի (նույն տեղում),— գոյ. Արդի հայերենում այն ձևեր է բերել «ծիրան (մրդի տեսակ) վաճառող (անձ)» իմաստը և նորից հանգես է դադար ածական||գոյական երկարակցությամբ: Համարժեք Միևնույն ժամանակ զարգացումը խմբվել էին շուկայի մոտ,— ած. Միևնույն ժամանակները թանկ էին վաճառում իրենց ապրանքը,— գոյ.:

Կան որոշ բառեր, որոնք պահպանել են զարգարյան իմաստները և դրանից բխող խոսքիմասային երկարակցությունը, սակայն արդի հայերենում ձևեր են բերել նոր իմաստներ և դրանցով պայմանավորված՝ ածական||գոյական խոսքիմասային երկարակցություն: Այսպես՝ կողմնապահ բառը երկարակցություն ունի զարգարում՝

1. «գավառի կամ նահանգի տեր, կառավարող, իշխան» իմաստով,

2. Տգործի աշ կամ ձախ ձևը պահող գործառն» իմաստը, արդի հայերենում պահպանելով այդ իմաստները՝ ձեռք է բերել նաև «մեկի կողմը պահող, որն է բանի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունեցող, կողմնակալ (անձ)» իմաստը, որով նույնպես ածական||գոյական երկարժեքություն ունի:

Նախնային բառը զրաբարյան իր ճեղքանքան: անկարծելի» իմաստին արդի հայերենում ավելացրել է «նոր նշանված (անձ)» իմաստը, որով նույնպես ածական||գոյական երկարժեքություն ունի և այլն:

2) Բարդ և բարդ ածանցավոր ածական||գոյական երկարժեք բառերի մյուս խումբը չի վերաբերում անձերին. դրանք մատնանշում են.

ա) տեղանքը և բնութագրում այն՝ զառիվայր, զառիվեր,

բ) Հոտի տեսակ և բնութագրում այն՝ ժահախոտ,

գ) Կենդանական աշխարհը և բնութագրում այն՝ խեցեմորթ, քանձրամորթ,

դ) Բուսական աշխարհը և բնութագրում այն՝ ծառատունկ, մատաղատունկ, ոսկեծաղիկ,

ե) Հանքատեսակը և բնութագրում այն՝ կարծրանյութ և այլն,

զ) Աարքի, զենքի տեսակը և բնութագրում այն՝ հրահան, ձիքահան, միասայր, լայնալիճ և այլն,

է) Բնության մեջ հանդիպող իրեր, երևույթներ և բնութագրում դրանք՝ Բարձալո, Բարակարկառ, կենդանակերպ,

ը) Ոռանկյունաշափական և այլ պատկերներ, անուններ կամ դրանց հետ առնչություն ունեցող բառեր՝ եռանկյուն, զծագիր, ուղղանկյուն, Բալանկյուն,

թ) Այս բառերը նաև մարդու հետ առնչություն ունեցող առարկաներ, երևույթներ, ընդհանրապես իրերի, երևույթների, մարդու գործունեության այս կամ այն բնագավառին վերաբերող բառեր են՝ ախաաբիժ, ինճագիր, կենդանադաձ, ձեռագործ և այլն:

Լծակից բառը երկարժեք է ինչպես անձի, այնպես էլ իրի առումով՝ որպես անձ՝ միևնույն գործը կատարող անձերից յուրաքանչյուրը, գործակից (անձ), կողակից, զուգակից, ամուսին (այդ կամ կին), որպես իր՝ միևնույն լծին լծված եզներից յուրաքանչյուրը:

Ոչ անձն մատնանշող բառերը հիմնականում պահպանել են զրաբարից ի վեր ավանդված բառիմաստները և բնականաբար խոսքիմասային արժեքները:

Ավարտելով ածական||գոյական - ածական||գոյական տարաբեք բառերի տարածմանակյա տարաբեքության դրսևորման քննությունը՝ նկատում ենք օրինականների բաղմազանությունը և դրանց մեծ թիվը, որը ապացուցում է, որ այս տեսակը նույնպես հայերենում օրինաշափ երևույթ է և հատուկ մեր լեզվին:

բ) Ածական||մակրայ>ածական||մակրայ տարածմանակյա տարաբեք մեծ թիվով բառեր են առկա մեր լեզվում՝ ածականի և մակրայի խոսքիմասային իմաստների մասնակի ընդհանրության հիմքով պայմանավորված, իսկ սրանց խոսքիմասային արժեքները տարբերակվում են շարահյուսական մակարդակում: Այսպիսի տարածմանակյա տարաբեք բառեր են՝ ահեղ, անագին, ամփոփ, անաշառ, աներկյուղ, անզգույշ, զայրագին, հերարձակ, շատ, սքափ, ուժգին, սրտաւորով, օձանման և այլն:

Որպես կանոն ածական||մակրայ երկարժեք բառերը պահպանել են բառիմաստի իրենց ամբողջ ծավալը՝ կրելով իմաստային աննշան փոփոխություններ: Գրաբարում որոշ բառերի մակրայական արժեքը զուգահեռ ձևեր է ունեցել, այսպես՝ անաշառ||անաշառաբար, աներկյուղ||աներկյուղաբար, անզգա||անզգաբար, անզգույշ||անզգույշաբար, անխնամ||անխնամաբար, անխոտոր||անխոտորապես||անխոտորաբար, խանգամիտ||խանգամտաբար և այլն:

Բնագրային օրինականների միջոցով որոշներ դրանց խոսքիմասային արժեքները: Հմտ:

Նրի բեռնաբեկ ընդհանուր քանակը (նշմ, 2, 161),—ած.: Որպես յինէն ձեր տուր, նույնպես և դուք ձեր տար (նույն տեղում),—մկբ.: Փամանակակից հայերենում՝ Բազարանցիք ձեր պաշար էին բաժանում հայ գործերին (ՄՇ, 138),—ած.: Մկբ. նախագարր սովի ժամանակ ձեր կերակրեց ժողովրդին իր հացով (Մ, 3, 344),—մկբ.:

Եւ ասլ Յուդիթ Բարձրաձայն բարրառով (նշմ, 1, 464),—ած.: Սկսաւ ասել բարձրաձայն (նույն տեղում),—մկբ.: Փամանակակից հայերենում՝ եվ բարձրաձայն աղաղակը թնդացրեց մեր աշխարհը (ԺՀԲԲ, 1, 300),—ած.: Հանկարծ դահլիճում բարձրաձայն լսվեց իր ազգանուն, անունը (նույն տեղում),—մկբ.: Գովեստս անճառս և անլուխ (նշմ, 1, 158),—ած.: Ջէակիցդ հօր պորդի փառաւորեմք անլուխի (նույն տեղում),—մկբ.: Փամանակակից հայերենում՝ Անլուխի դանդաղատուն (ՊՍ, 268),—ած.: Անլուխի վշվշում է պղտոր ջուրը Դերեղի (ՀԲ, 83),—մկբ.:

Զծանրարեւոնելու մեր հողավածը օրինակների առատությամբ բավարարվենք այսքանով: Նշենք նաև, որ ինչպես ածական>ածական||մակբայ տարածամանակյա տարարժեքությունն է սովորական մեր լեզվում, նույնպես էլ սովորական և մեր լեզվին հատուկ է ածական||մակբայ>ածական||մակբայ տարածամանակյա տարարժեքությունը, որը ակնառու է դառնում օրինակների առատությամբ:

դ) Գոյական||մակբայ>գոյական||մակբայ տարածամանակյա տարարժեք բառերը սահմանափակվում են շատ քիչ օրինակներով: Այսպես՝ երեկ բառը դրարարում պոլական էր «երեկո, իրիկուն», իմաստով, ինչպես՝ Ահա դարձաւ օրս յերեկս (նշմ, 1, 675), կամ Յերեկս աւարտման աւուր այսմ յաւիտենի (նույն տեղում): Սակայն արդեն զբաղարում բառը ունի մակբայական արժեք «երեկոյան, երեկոյան դեմ» իմաստով, ինչպես՝ Գիշերավար աստղ ընդ երեկս երեկալ (նույն տեղում): Միջին հայերենում բառը պահպանել է նաև բառիմաստը, և՛ խոսքիմասային արժեքները: Փամանակակից հայերենում յառու իմաստափոխվել է: Այսպես՝ արդի հայերենում երեկ բառը որպես գոյական ունի «օր, որ նախորդում է այսօրվան» իմաստը, ինչպես՝ Երեկ լավ էր, քանից վուր էսօր: Սակայն մոտ իմաստով՝ «սովալ օրվա նախորդ օրը, նաև մակբայ է, ինչպես՝ Միակ վտակը, որից գործը ջուր առավ երեկ, կիրճի բերանից դեղի այս խորածորն է իջնում (ԺՀԲԲ, 1, 573): Չնայած երեկ բառը իմաստափոխվել է, սակայն պահպանել է գոյական||մակբայ երկարժեքությունը, և նկատելի է մակբայական արժեքի գերակայությունը գոյականականի նկատմամբ յառուգործածության գործընթացում:

Յերեկ բառը դրարարում նույնպես գոյական||մակբայ երկարժեքություն ունի: Որպես գոյական այն ունի «օրվա ժամանակը արեւ ծագելուց մինչև մայրամուտ» իմաստը, ինչպես՝ Յերեկ առ հաւակողմամբ գնաց ընդ արեւմուտս, և զցայց առ հլուսիսեալ (նշմ, 2, 913): Սակայն այն նաև մակբայ էր՝ «ցերեկվա ժամանակ, ցերեկով» իմաստով, ինչպես՝ Աղաչեմ ղցայդ և զցերեկ դաէր սատուած երկնից (նույն տեղում): Յերեկ բառը պահպանել է իր բառիմաստը և խոսքիմասային արժեքները նաև միջին հայերենում: Փամանակակից հայերենում ցերեկ բառը պահպանել է իր բառիմաստի ամբողջ ծավալը: Այն մեր լեզվի ներկա փուլում նույնպես դրսևորում է գոյական||մակբայ երկարժեքություն: Նման զերեկը դուրսն էր անցկացնում, իսկ դիշերը գիշերապահի պաշտոն էր կատարում (ԺՀԲԲ, 4, 556),—գոյ.: Կհանդիպենք ցերեկով (նույն տեղում),—մկբ.:

Սեր կարծիքով և՛ երեկ, և՛ ցերեկ բառերը նախապես եղել են գոյականներ, իսկ մակբայական արժեքը հետագայում են ձեռք բերել, որը պայմանավորված է այդ բառերի բառիմաստներում ժամանակի ընդհանուր իմաստի առկայությամբ, որը հենց հանդիսացել է այն հիմքը, հատման այն կետը այդ բառերում գոյականի և մակբայի խոսքիմասային արժեքների համատեղման համար:

Շեշտ բառը բրաբես գոյական գրաբարում ունի նույն իմաստը, ինչ ժամանակակից հայերենում, ինչպես՝ Ամենայն անուանք՝ յորս ոչ են շեշտի՝ և պարոյկը ամենեքան նոքա բույթը են (ՆՀԲ, 2, 475): Արդի հայերենում շեշտը գրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, — գոյ.: Սակայն այն գրաբարում ունի նաև ճշգրտակի՝ մակբայական իմաստը և խոսքիմասային արժեքը, որը մեր կարծիքով նույնպես ձեռքբերովի է և կապված է բառիմաստի ընդլայնման հետ, ինչպես՝ (Սուսերաւ) շեշտ ընդ մեջ ձէղքէր գամուր գրլխանոցն (նույն տեղում): Արդի հայերենում այս իմաստը պահպանվել է, սակայն հազվադեպ գործածություն ունի, ինչպես՝ Հրանտը կանգ առավ և գլուխը թեք՝ շեշտ կնոջը նայեց (ԺՀԲԲ, 4, 70): Նկատելի է, որ երեք բառերում էլ մակբայական արժեքը ձեռքբերովի է և կապվում է բառիմաստի հետագա զարգացման հետ:

Չնայած այս հանգամանքին՝ երեկ և ցերեկ բառերում մակբայական արժեքը դարձել է գերիշխող, իսկ շեշտ բառում, անշուշտ, առկա է գոյականական աբսթրեկտ գերակայությունը:

դ) Մակբայ||չաղկապ > մակբայ||չաղկապ տարածամանակյա տարարժեքություն են դրսևորում նա, մաքալանդ բառերը, որոնք պահպանել են իրենց բառիմաստները և խոսքիմասային արժեքները մեր լեզվի զարգացման ամբողջ գործընթացում:

Փաստորեն մեր քննարկած բառերը գրաբարից ի վեր հանդես են դալիս երկփեղկված արժեքներով: Բառագործածության ընթացքում նկատելի է որոշակի բառերում խոսքիմասային արժեքների անհավասարաչափ բաշխում (խոսքի մասերից մեկի գերակայությունը մյուսի նկատմամբ), կամ երկու խոսքի մասերով էլ բառը հավասարապես գործածվում է: Այս բառերի խոսքիմասային արժեքները ոչ միայն գրաբարից ի վեր երկփեղկվել են, այլև դրանք անփոփոխ հարատևել են մեր լեզվի պատմական զարգացման հետագա գործընթացում՝ չկրելով քանակային և որակային փոփոխություններ: Բայց մեր լեզվում առկա են երկարժեք բառեր, որոնք հետագայում պահպանել են երկարժեքությունը, բայց փոխել են խոսքիմասային արժեքների տեսակները, կամ երկարժեք գրաբարյան բառերը հետագա դարերում իրենց խոսքիմասային արժեքներին ավելացրել են նորերը՝ կրելով խոսքիմասային արժեքների քանակային փոփոխություններ:

Երկարժեք բառերի վերջին երկու տեսակների տարածամանակյա տարարժեքությունը կարող է հանդիսանալ առանձին ուսումնասիրության նյութ:

ՀԱՄԱՌՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1995:

ԱԲԴ—Ակսել Բակունց, Գրականության մասին, Երևան, 1959:

ԺՀԲԲ—Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1969—1990:

Լ—Լևո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947:

ՀԳ—Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1980:

ԻԲ—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 1—4, Երևան, 1951—1953:

ՄՇ—Մարիկտա Շահինյան, Երկեր, Երևան, 1993:

ՊՍ—Պարույր Սևակ, Անլուրի զանգակատուն, Երևան, 1966:

ՆՀԲ—Նոր բառգիրք հայկադևան լեզուի, հ. Ա—Բ, Վենետիկ, 1836—1837:

ՍԶ—Ստեփան Զորան, Պատմվածքներ, Երևան, 1980:

Բ—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1—10, Երևան, 1955—1959:

ДИАХРОНИЧЕСКИЕ МНОГОЧАСТНОРЕЧНЫЕ СЛОВА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(двучастноречные > двучастноречные)

А. П. АИРАПЕТЯН

Р е з ю м е

Армянский язык богат двучастноречными диахронными словами. Есть слова, которые приобрели двучастноречное значение в дописанный период и сохранили это качество в процессе всего развития языка, не подвергаясь качественным и количественным изменениям. Такими словами являются: прилагательное||существительное/ (*ծերունի, ասիական, դինդրական, օտարական*), прилагательное||наречие/ (*անհղ, անհրկուղ, ակգին, ճրի*), существительное||наречие/ (*հրկ, ցհրկ, շհւտ*), наречие||союз/ (*և, մանավանդ*). Если первые два есть обычное и регулярное явление в нашем языке и языковая норма, то последние два охватывают небольшую группу слов.